



# ՀՀ ջրային պետական կադաստրի բաղադրիչ հանդիսացող ջրատնտեսական հաշվեկշռի կազմման կիրառական ծրագրերի մշակման և ներդրման ծառայության մատուցում

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Քաղաք** Երևան  
**Պատվիրատու** ՀՀ Բնապահպանության նախարարություն  
**Ժամկետները** 2005 թ


## Տեխնիկական առաջադրանք

1. Հիմնավորել և մշակել ջրատնտեսական հաշվեկշռի կազմման մեթոդաբանությունը:
2. Կատարել աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) բազայի վրա հիմնված կիրառական ծրագրային փաթեթի ընտրություն:
3. Մոդելային տարածքի համար ջրատնտեսական հաշվեկշռի կազմման փորձնական մոդելի մշակում:



## Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Դասակարգվել են ՀՀ գետային ավազանների հիմնական առանձնահատկությունները:
- ✓ Վերլուծվել են ՀՀ գետավազանային սկզբունքով ստեղծված ջրատնտեսական համակարգերի հիմնական բնութագրերը:
- ✓ Մանրամասն նկարագրվել են ջրատնտեսական ստատիկ և դինամիկ հաշվեկշռի կազմման սկզբունքները:
- ✓ Ներկայացվել են ջրատնտեսական հաշվեկշռի կազմման համար առաջարկվող մեթոդոլոգիան և նախնական տվյալների բնութագրերը (ջրային ռեսուրսներ, ջրօգտագործում, ջրամբարներ և այլն):
- ✓ Ներկայացվել են ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում համակարգչային ծրագրերի կիրառման ներկա վիճակը:
- ✓ Հիմնավորվել է ջրատնտեսական հաշվեկշռի կազմման համար նպատակահարմար և ՀՀ-ի պայմաններին համապատասխանող կիրառական Mike Basin ծրագրային փաթեթը:
- ✓ Մշակվել է ջրատնտեսական հաշվեկշռի մաթեմատիկական փորձնական մոդելը Դեբեդ գետավազանի օրինակի համար
- ✓ Մշակվել են ուղեցույցներ ընտրված ծրագրային փաթեթի օգտագործման համար, հաշվի առնելով պոտենցիալ օգտագործողների պատրաստվածության աստիճանը:



## Աշխատանքի նպատակն է

Աջակցել ջրային պետական կադաստրի ստեղծմանն ու կայացմանը՝ նրա հիմնական բաղադրիչ հանդիսացող ջրատնտեսական հաշվեկշռի կազմման գործընթացում կիրառական ծրագրերի մշակմամբ և ներդրմամբ: